DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"19" հուլիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2005 թվականի N 981-Ն

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրի ձեւը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2005 թվականի հունիսի 23-ի
N 981-Ն որոշման

ԿԱՐԳ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրեր տալու կարգը:

2. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր ստանալու համար մշակութային արժեքների սեփականատերը կամ նրա լիազորած անձը (այսուհետ՝ հայտատու) հայտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ լիազորված պետական մարմին):

3. Հայտի գրանցման եւ պահպանման ընթացակարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

4. Հայտը պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) հայտատուի լրիվ անվանումը, գտնվելու վայրը եւ պետական գրանցման վկայականի պատճենը (ֆիզիկական անձանց համար՝ անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, հեռախոսահամարը, անձնագրի սերիան եւ համարը).

բ) մշակութային արժեքի անվանումը, քանակը, արտահանման նպատակը, արտահանման երկիրը, հայտարարություն սեփականության մասին.

գ) հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

5. Հայտատուն հայտին կից ներկայացնում է՝

ա) արտահանման համար հայտագրված մշակութային արժեքի փորձագիտական եզրակացության բնօրինակը եւ պատճենը.

բ) նույն մշակութային արժեքի 2 գունավոր լուսանկար՝ 10 x 15 չափսի, տարանցիկ փոխադրման դեպքում՝ 3 օրինակ:

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

6. Հայտատուն պետական սեփականություն համարվող պետական կամ այլ պահոցներում մշտապես պահպանվող մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր ստանալու համար հայտին կցվում է "Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով պահանջվող փաստաթղթերը:

7. Պետական սեփականություն համարվող՝ պետական կամ այլ պահոցներում մշտապես պահպանվող, պետական սեփականություն չհամարվող՝ պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա մշակութային արժեքների, ինչպես նաեւ մշակութային արժեքների պահպանական ցուցակում չգրանցված կամ գրանցման ոչ ենթակա մշակութային արժեքների ժամանակավոր արտահանումն իրականացվում է մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրով՝ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Լիազորված պետական մարմնի համապատասխան առանձնացված ստորաբաժանումը հաշվառում է պետական սեփականություն համարվող՝ պետական կամ այլ պահոցներում մշտապես պահպանվող, պետական սեփականություն չհամարվող՝ պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա մշակութային արժեքները, ինչպես նաեւ միջոցներ ձեռնարկում սահմանված ժամկետում չվերադարձված մշակութային արժեքների հետբերման նպատակով:

9. Հայտատուի ցանկությամբ՝ նվագարանի փորձագիտական եզրակացության բնօրինակի հիման վրա, լիազոր պետական մարմինը տալիս է "Նվագարանի վկայական"՝ լուսանկարով, որը վավերական է, եթե լուսանկարի վրա առկա է լիազորված պետական մարմնի համապատասխան առանձնացված ստորաբաժանման կլոր կնիքը:

Նվագարանի վկայականի ձեւը եւ տալու կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

10. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվում է պետական տուրք՝ "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ չափով:

11. Հայտատուն ներկայացնում է պետական տուրքի վճարման անդորրագիրը եւ ստանում մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիրը, մշակութային արժեքի փորձագիտական եզրակացության բնօրինակը եւ մշակութային արժեքի լուսանկարը՝ շրջերեսին մշակութային արժեքի տվյալների (արժեքի անվանումը կամ վերնագիրը, հեղինակը, ստեղծման ժամանակը, ստեղծման վայրը, նյութը, քանակը (բաղկացուցիչ մասերը), չափերը (քաշը), վիճակը, պահոցից արտահանվող մշակութային արժեքների դեպքում՝ ծածկագիրը) վավերացմամբ:

12. Վկայագիրը վավերական է, եթե դրա վրա կա լիազորված պետական մարմնի համապատասխան առանձնացված ստորաբաժանման կլոր կնիքը եւ պետի կամ տեղակալի ստորագրությունը:

13. Վկայագրին կցվող լուսանկարը վավերական է, եթե դրա վրա կա "Թույլատրվում է արտահանել" կամ "Թույլատրվում է ժամանակավոր արտահանել" դրոշմակնիքը լիազորված պետական մարմնի համապատասխան առանձնացված ստորաբաժանման պետի կամ տեղակալի ստորագրությամբ:

14. Մեկ վկայագրով կարելի է արտահանել մեկ եւ մեկից ավելի տարբեր մշակութային արժեքներ՝ համաձայն հայտի:

15. Մեկից ավելի մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման դեպքում վկայագրին կցվում է մշակութային արժեքների ցուցակ սույն կարգի 11-րդ կետում նշված մշակութային արժեքի տվյալներով: Ցուցակը վավերական է, եթե դրա վրա կա լիազորված պետական մարմնի համապատասխան առանձնացված ստորաբաժանման պետի կամ տեղակալի ստորագրությունը եւ "Թույլատրվում է արտահանել" կամ "Թույլատրվում է ժամանակավոր արտահանել" դրոշմակնիքը:

16. Հայտատուն վկայագրի պատճենի վրա ստորագրում է՝ փաստելով վկայագիր ստանալը:

17. Մշակութային արժեքների արտահանման իրավունքի կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիրը ենթակա է մեկանգամյա օգտագործման:

Մշակութային արժեքների արտահանման դեպքում արտահանման իրավունքի վկայագիրն ուժի մեջ է մեկ տարի:

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

Մշակութային արժեքի ժամանակավոր արտահանման դեպքում վկայագիրն ուժի մեջ է հայտատուի հայտում նշված ժամանակահատվածում, որը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը:

18. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրի կրկնօրինակն ստանալու համար հայտատուն դիմում է լիազորված պետական մարմին:

19. Հայտի ընդունումը կատարվում է սույն կարգի 4-րդ եւ 5-րդ կետերի պահանջների համաձայն՝ գործի վրա ավելացնելով հայտատուի հիմնական գործի համարը:

20. Վկայագրի կրկնօրինակն ստանալու համար հայտատուն վճարում է "Պետական տուրքի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքը:

Վկայագրի վերին ձախ անկյունում գրվում է՝ "Կրկնօրինակ":

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2005 թվականի հունիսի 23-ի
N 981-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՎԿԱՅԱԳԻՐ N

Տրված է ___ _____ 200 Ã. քաղ. Երեւան

1. Քաղաքացի _____
(անունը, ազգանունը)

2. Քաղաքացիությունը _____ Անձնագիր N _____

3. Իրավաբանական անձ
_____
(անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի սերիան եւ համարը)

_____
_

4.
_____
(լրացնել "Մշակութային արժեքի արտահանում" կամ "Մշակութային արժեքի ժամանակավոր արտահանում" բառերը)

5. Արտահանման տեւողությունը _____
(լրացվում է ժամանակավոր արտահանման դեպքում)

6. Արտահանման երկիրը _____

7. Ընդունող կողմի անվանումը _____
(լրացվում է ժամանակավոր արտահանման դեպքում)

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

8. Արտահանման նպատակը
_____

(լրացվում է ժամանակավոր արտահանման դեպքում)

9. Արտահանվող մշակութային արժեքների՝
ա) անվանումը _____

_____

բ) քանակը
_____

գ) ընդհանուր գինը _____
դ) ցուցակը _____ թերթից (կցվում է)
ե) լուսանկարների քանակը_____ հատ (կցվում է)

10. Վկայագիրն ուժի մեջ է մինչեւ _____ _____ 200 թ.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ _____
_____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

UNESCO Cultural Heritage Laws Database
(Copyright and Disclaimer apply)